№ 209 ՇԱԲԱԹ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 209

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK“.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ.

Հոկտեմբ. 1-ից մինչև նոյեմբ. 1-ը 85 կ.: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԷՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

հրաւիրում է այն անձերին, որոնք կամենում են վերցնել նաւթային մթերքների մատակարարութիւնը քաղաքային հիմնարկութիւնների համար, 1913 թւի ընթացքում, հետևեալ քանակութեամբ.

1) Մազութ—142,000 փութ: 2) Դիզէլի դվիգատելների համար թեթև նաւթ—15,000 փ.: 3) Հում նաւթ—5000 փ.: 4) Կերոսին—8000 փ.: 5) Բէնզին—400 փ.: 6) Իւղ մոտորների ցիլինդրների համար 8″—4000 փ.: 7) Հանքային իւղ—825 փ.: 8) Հանքային ճարպ—140 փ.:

Պայմանների ծրագրերը, կոնդեցիաները և բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները կարելի է ստանալ Քաղաքային Վարչութեան մթերային բաժանմունքում, ժամը 10—3-ը: Յայտարարութիւնները ձգվում են Քաղաքային Վարչութեան I բաժանմունքում նրանց համար յատկացրած արկղը: Յայտարարութիւնները կարելի է տալ մինչև հոկտեմբերի 5-ը:

(առ) 713. 3—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Այսօր, շաբաթ, սեպտեմբերի 22-ին
ՀԱՅՈՑ Դ. ԸՆԿ. ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ Պ. ԱՐՄԷՆԵԱՆԻ
ԵՒ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ
Կը ներկայացնէ Շիլլէրի յայտնի
ԱՒԱԶԱԿՆԵՐ
ողբերգութիւնը 5 արար. և 7 պատկերով,
Թարգմ. Փ. Վարդանեանի:
Մասնակցում են՝ տ. տ. Ցասմիկ, Յովհաննիսեան, պ. պ. Գալստեան, Գրիգորեան, Դաւիթ-Խանեան, Երամեան, Լազարեան, Լաքա, Հայկազեան, Ծօնեան, Յարութիւնեան II, Ռուսեան, Սերժ, Տէր-Առաքելեան, Տէր Յովհաննիսեան և ուր.:
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին:
Ռէժիսոր՝ ԱՐՄԷՆԵԱՆ
Հերթ. կարգադրիչ՝ պ. պ. Գրիգորեան և Թումանեան
711. 1—1

ԿԻՍԼՕՎՕԴՍԿԻՑ վերադառնալով վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնը Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի:
Սրսկումներ նաև տուբերկուլինով և ՌԱԴԻՒ պրէպարատներով:
Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը:
Католическая ул. д. № 10. Телеф. 7—92.
(ա.օ.) առ. 699. 100—4

ԲԺԻՇԿ
Ա. ՇԻԽԵԱՆՑ
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ արտասահմանից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը. 3—1

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

IV

Անցնենք խօսելու կանդիդատների մասին:

Ընդունելով որ մեր նախորդ յօդուածում յիշված բոլոր կանդիդատները ունեն օրէնքով պահանջված գոյքային ցենզը, տեսնենք ով նրանցից յարմարագոյն է ընտրվելու:

Ամենից առաջ այդ ցուցակից պէտք է հանենք նախկին պատգամաւոր Ց. Սաղաթելեանին, որի անձեռնհասութիւնը, իբրև հայ ժողովրդի ներկայացուցչի, արդէն ապացուցված կարելի է համարել:

Բացի նախորդ յօդուածի մէջ յիշված յատկութիւններից, որոնցով անպայման պէտք է օժտված լինի հայ պատգամաւորը և որոնց շատից զուրկ է Ց. Սաղաթելեանը, հայ ներկայացուցիչը պէտք է իր ուղղութեան, իր համոզմունքների և հայեացքների մէջ լինի տոկուն, հաստատուն, աննկուն և անշեղ: Ց. Սաղաթելեան ցոյց չը տուեց այդ գովելի յատկութիւնները. մտնելով Դումայի մէջ պաշտօնապէս իբրև կուսակից «Դաշնակցութեան», նա իր վարմունքով հասցրեց գործն այնտեղ, որ ռուսաց թունդ աջակողմեանների կողմից հռչակվեց իբրև «գողտրիկ ընկեր». ապա նա յարեց «աշխատաւորականների» աննշան կուսակցութեան, թէև այդտեղ նա համակրութիւն ձեռք բերել չը կարողացաւ: Այդպիսի երերուն, տատանվող, օպպորտունիստ ներկայացուցիչները կարող են մի օր և սև-հարիւրեակային խմբին յարել:

Նա միանգամայն անյարմար է և նրա վերընտրութիւնը միայն ապացոյց կը լինի մեր քաղաքական տհասութեան և խակութեան:

Միանգամայն անյարմար է և Տ. Բէգզադեանի կանդիդատութիւնը, իբրև մի անձի, որին հայ ժողովուրդը չէ ճանաչում, որ մինչև այսօր որևէ բանով, որևէ գործունէութեամբ աչքի չէ ընկել, բացի այն՝ որ կապիտալիստների մօտ չաղ ռոճիկաւոր պաշտօն է ունեցել: Նա ծանօթ չէ հայ ժողովրդի կեանքի, անցեալի, պատմութեան հետ, մեր երկրի բազմատեսակ կարիքների և ցաւերի հետ: Նրան բնաւ չէ ճանաչում և հայ ժողովուրդը, և ոչ մի փաստ չը կայ, որ նա կարող է օգտակար և արժանաւոր ներկայացուցիչ հանդիսանալ:

Այնպիսի միջակութիւններ, որպիսին Տ. Բէգզադեանն է, շատ կան Բագուի մէջ, և նրա կանդիդատութիւնը առաջ քաշողները կամ շատ աղօտ գաղափար ունեն ժողովրդական ներկայացուցչութեան մասին, կամ խնդրին վերաբերվում են թեթևամտութեամբ, այլ ոչ լրջօրէն:

Մնում է ուրեմն ընտրութիւն կատարել մնացեալ 5 կանդիդատների— այն է՝ Ալ. Քալանթարի, Ալ. Խատիսեանի, Կ. Խատիսեանի, Մ. Պապաջանեանի և Ս. Յարութիւնեանի—միջից:

Որոշ պատճառից ստիպված, մենք անյարմար ենք գտնում մեր պաշտօնակցի վրա երկար կանգ առնել. այսքանը կասենք, որ այդ կանդիդատներից ոչ ոք գուցէ այնքան մօտ և խոր կերպով ծանօթ չէ Անդրկովկասի տնտեսական, հողային, արդիւնաբերական կեանքին, հայ գիւղական ժողովրդի կարիքներին, ցաւերին, որքան Ալ. Քալանթարը:

Իբրև հռետոր, իբրև բազմակողմանի և եւրօպական կրթութեան տէր անձն Ալ. Խատիսեան կարող է, մեր կարծիքով, արժանաւոր ներկայացուցիչ լինել հայ ժողովրդի՝ Պետական Դումայում.

Կ. Խատիսեան, իբրև երկարամեայ հասարակական և ազգային գործիչ, իբրև նոյնպէս եւրօպական կրթութեան տէր, իբրև եռանդուն անձն կարող է նոյնպէս արժանաւոր կերպով ներկայացնել Պետական Դումայում հայ ժողովուրդը:

Միքայէլ Պապաջանեան և Ս. Յարութիւնեան, երկուսն էլ փորձված փաստաբաններ, երկուսն էլ հասարակական և ազգային գործիչներ, իբրև գործունեայ ույժեր կարող են նոյնպէս կենտրոնացնել իրանց վրա պատուիրակների քուէները, բայց մենք նախամեծարութիւնը կը տայինք Մ. Պապաջանեանին, որ աւելի հաստատ և տոկուն է իր համոզմունքների և հայեացքների մէջ:

Ցամենայն դէպս բոլոր այդ 5 կանդիդատները պատկանում են պրոգրեսիստ բանակին, և ընտրութիւնը պէտք է կատարել դրանց կամ դրանց նման անձանց շարքից:

Սակայն ամենից առաջ պէտք է որ ընտրողները ընտրեն համապատասխան պատուիրակներ (выборщики), ընտրեն նոյնպէս առաջադիմական պատուիրակներ, որպէսզի սրանք էլ ընտրեն յարմար, արժանաւոր և համապատասխան պատգամաւոր:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
20 սեպտեմբերի

Կ. Պօլիս.—Նախկին մինիստր Ջավիդին բանտից արձակեցին:

Մինիստրների խորհուրդը խորհրդակցում է երեկոյեան ժամը 4 ու 30 րոպէից:

Դրամատների տեղեկութիւնների համեմատ ստորագրված է նախնական արձանագրութիւն Իտալիայի հետ հաշտութիւն կապելու մասին:

Բազէլ.—Շվեյցարական գործակալութեանը հաղորդում են Լօզաննից, որ նախատեսվում է հաշտութեան պայմանագիր ստորագրել Իտալիայի և Թիւրքիայի միջև:

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հերքում է Իտալիայի և Թիւրքիայի միջև հաշտութիւն կնքելու լուրը:

Վիէննա.—Հելլէնների թագաւորը ընդհանուր ունկնդրութեան ընդունեց ռուսաց, իտալական և ֆրանսիական դեսպաններին:

Ռամբույէ.—Ֆալիէրը ի պատիւ Սազոնովի նախաճաշ տուեց, որին ներկայ եղան Իզվօլսկին, Պուանկարէն և Պետերբուրգի ֆրանսիական դեսպան Լուիս:

Կիսլովոդսկ.—Եկաւ մինիստրների խորհրդի նախագահը:

Մադրիդ.—Զէնքի կանչվեցին 1907—1912 թւերի պահեստները:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
20 սեպտեմբերի

Կ. Պօլիս.—Ողջունելով զօրաժողովը, արքունական շինութիւնները և թիւրքական տները զարդարված են դրօշակներով:

Լրագիրները տպում են շովինիստական յօդուածներ, սակայն մամուլը և պաշտօնական շրջանները յոյս ունեն, որ մեծ պետութիւնների միջամտութիւնը պատերազմի առաջը կառնէ:

Քաղաքը լի է մթերքներով: Երկաթուղագծերի վրա երթևեկում են զինուորական գնացքներ: Զօրաբանակի մի մասը հրաման ստացաւ պատրաստ լինել անմիջապէս պատերազմի երթալու: Շոգենաւերը կառավարութիւնից գրաւված են զօրքերի փոխադրութեան համար:

«Թանինի» տեղեկութիւնների համաձայն մալիսօրների երկիրը ամբողջովին բռնկված է ապստամբութեամբ: Հաշտարար մասնաժողովներին երկրի ներսը չեն թոյլ տուել: Ընդդիմադիր պարագլուխները յայտնում են, որ նկատի առնելով ընդհանուր վտանգը՝ օպպօզիցիան կը պաշտպանէ կառավարութեան:

Սերբիական նոտայի 48 ժամեայ ժամանակամիջոցը լրացաւ: Սերբիական դեսպանը չը ստանալով պատասխան Բ. Դռնից, հեռագրեց Բէլգրադ, թէ հրահանգների է սպասում, և մտադիր է մեկնել, յանձնելով գործերը քարտուղարին:

Դրութիւնը չը փոխվեց: Մասնաւոր անհատների ձիերը ցուցակագրվում են:

Արևելեան գծերը այլ ևս միջազգային ճանապարհորդներին չեն ուղարկում:

Յունաց դեսպանը բողոքեց Բ. Դրան առաջ յոյն նաւերը բռնելու դէմ:

Բ. Դրան տեղեկութիւններից երևում է, որ բալկանեան պետութիւնների նոտան պահանջում է Մակեդոնիայի աւտօնոմիա:

Քաղաքական ակումբները դադարեցրին ընտրողական ագիտացիան և ցուցակագրում են կամաւորներին, որոնք ցոյցեր են կազմակերպում Բ. Դրան առաջ:

Սօֆիա.—Քաղաքը նմանվել է պատերազմական բանակի: Տղամարդիկ կանչված են զինուորական ծառայութեան, բացի ծերունիներից և երեխաներից: Հիւանդանոցները մնացել են առանց ծառայողների: Հիւանդներին խնամում են Սօֆիայի կանայք: Կարմիր Խաչը կոչով դիմեց ազգաբնակութեան: Չը նայած նորմալ կեանքի խախտմանը, տիրում է լիակատար կարգուկանոն: Կոմենդանտական վարչութիւնը կարգադրեց առևտրականներին չաւելացնել մթերքների գները, սպառնալով հակառակողներին դատել զինուորա-դաշտային դատարանով: Զինուորական մինիստրութիւնը կանոններ հրատարակեց տեղական մամուլի համար, որոնք թոյլատրում են հաղորդել միմիայն մինիստրութիւնից, շտաբից և գլխաւոր հրամանատարից ստացված տեղեկութիւնները: Արգելվում է տպել այնպիսի յօդուածներ, որոնք կարող են վատ ազդել զօրքի և ժողովրդի ոգևորութեան վրա, գնահատել պատերազմը, հաղորդել մոբիլիզացիայի և զօրքերի տեղափոխութեան մասին, պահեստի մթերքների, հրամանատարներ նշանակելու, զօրքի քանակութեան, սպանվածների և վիրաւորների թւի մասին, հաղորդել պատերազմական անաջողութիւնների, կատաստրոֆաների և ապստամբութիւնների մասին, սպառնալով խիստ պատիժ:

Ազգային ժողովը կը գումարվի սեպտ. 22-ին երկրում յայտարարված պատերազմական դրութիւնը և արտակարգ ծախքերը հաստատելու համար:

Բէլգրադ.—«Պօլիտիկա» լրագիրը հաղորդում է, որ մինիստրների խորհրդի նիստում քննվեց բալկանեան պետութիւնների հաւաքական նոտան, որը յանձնվելու է Բ. Դրանը Մակեդոնիայի և Հին Սերբիայի լիակատար աւտօնոմիայի պահանջով: Պատասխանելու համար տրված է երեք օր ժամանակ: Ժամանակը լրանալուց յետոյ Թիւրքիային կը յանձնվի ուլտիմատում, իսկ մեծ պետութիւններին՝ յուշագիր, որի մէջ բացատրված կը լինի, թէ չորս բալկանեան պետութիւնները անկարող էին ուրիշ գործելակերպ ունենալ, ի նկատի ունենալով Թիւրքիայի դրժումը:

Գործող զօրքի ընդհանուր հրամանատար նշանակվում է գեներալ Պուտնիկը. գնդապետ Մարենովիչը ուղարկվում է լինելու բօլգարական գլխաւոր շտաբին կից, իսկ սերբիական գլխաւոր շտաբին կից կը լինի բօլգար պատգամաւոր.

Սերբիական երկաթուղիների վարչութիւնը յանձնվեց զինուորական մինիստրութեան:

Հռոմ.—Բէլգրադի, Սօֆիայի, Աթէնքի և Ցէտինիէի իտալական դեսպանները հրահանգներ ստացան խորհուրդ տալու բալկանեան պետութիւններին հանգիստ մնալ ու խաղաղութիւնը չը խախտել:

Պարիզ.—«Թանը» հրատարակեց Իզվօլսկիի յայտագիրը յանուն մեծ պետութիւնների՝ յուլիսի 12-ից 1908 թ., որը և գտաւ ընդհանուր հաւանութիւն: Յիշեալ յուշագրից երևում է, որ մեծ պետութիւնները դեռ այն ժամանակ նախագծում էին վերստին իրանց ձեռքը վերցնելու մակեդոնական բարենորոգումները, եթէ դրութիւնը Մակեդոնիայում անբաւարար մնայ:

Պուանկարէն՝ եռանդով մատնանշեց բալկանեան չորս պետութիւնների ներկայացուցիչներին, թէ նրանց կառավարութիւնների ձեռք առած միջոցները լուրջ են, յայտնելով որ անգամ նրանց նպատակը պահանջում է խուսափել խաղաղութիւնը խախտելուց:

Պուանկարէն երկար խօսակցեց Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռուսաստանի դեսպանների հետ, երեկոյեան ժամը 10-ին ընդունեց Սազօնովին, որի հետ խօսակցութիւնը տևեց մինչև ժ. 11 ու 30 ր., շօշափելով համարեա բացառապէս բալկանեան դրութիւնը և խաղաղութիւնը պահպանելու միջոցները: Վաղը առաւօտեան Պուանկարէն նորից կը խորհրդակցէ Սազօնովի հետ:

Հավասին հեռագրում են Լօնդօնից. «Դիպլօմատիական շրջանները, լիովին գիտակցելով Բալկանների դրութեան լրջութիւնը, կարծում են, որ մեծ պետութիւնների միահամուռ ազդեցութիւնը Սերբիայի, Բօլգարիայի, Յունաստանի և Չերնօգորիայի վրա՝ գուցէ թէ խափանէ միջադէպը: Այդ նպատակին են ձգտում ներկայումս Լօնդօնի, Բերլինի և Պարիզի կաբինէտները: Ռուսաստանի և Աւստրիայի հայեացքների հնարաւոր տարաձայնութիւնը հազիւ թէ ներկայ րօպէին ստեղծէ անյաղթելի արգելք, որովհետև երկու մեծ պետութիւնները հաւասարապէս հետամուտ են Բալկանում խաղաղութիւնը պահելուն: Ուստի և յոյս կայ, թէ կաջողվի յիշեալ երկու պետութիւններին էլ թեքել կամ Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմը, կամ թէ միահաւան քայլեր անելու մնացած մեծ պետութիւնների անունից, կամ իբրև նրանցից լիազօրութիւն ստացած, Սօֆիայում, Բէլգրադում, Աթէնքում և Ցէտինիէում, և այդպիսով կարելի կը լինի միանգամայն սառնասրտութեամբ քննել Բալկանների կացութիւնը և մշակել բարենորոգումների ծրագիր Բ. Դրանը ներկայացնելու համար»:

Բերլին.—Հավասին Լօնդօնից ուղարկած հեռագրի առիթով Պետ. Հեռ. Գործակալութեան թղթակցին տեղական քաղաքական շրջաններում մատնանշեցին, որ յանուն ընդհանուր շահերի ցանկալի է ցրել այն սխալ ենթադրութիւնը, թէ իբր տարաձայնութիւն գոյութիւն ունի Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի միջև բալկանեան հարցի վերաբերմամբ:

Աթէնք.—Յունական մի նաւակ, չը նայած որ ունի Դարդանէլը անցնելու թոյլտուութիւն, բռնվեց: Թիւրքական իշխանութիւնների այսօրինակ միջոցները թողեցին այստեղ խոր տպաւորութիւն:

Ռոստով Դ./Վ.—Որովհետև Թիւրքիան բռնել է 55 շոգենաւ ռուսական հացահատիկով, այն պատրուակով՝ իբր յիշեալ նաւերն ունեցել են յունական և բօլգարական դրօշակներ, Բօրսային կոմիտէտը և դրամատները դիմեցին Կոկովցէվին և Տիմաշեվին միջնորդութեամբ՝ ձեռք առնելու միջոցներ նաւերը ազատելու:

Տագանրոգ.—Բօրսային կոմիտէտը, էկսպորտները և բանկերը հեռագիր ուղարկեցին մինիստրների խորհրդի նախագահին և առևտրի մինիստրին, խնդրելով անյապաղ ապահովել Թիւրքիայից բռնված յունական շոգենաւերի երթևեկութիւնը ռուսական հացահատիկով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

—o—

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վանից, սեպտ. 14-ից, Աղթամարի կաթողիկոսական փոխանորդ Եզնիկ վարդապետը հետևեալ հեռագիրն է խփել Կ. Պօլսի հայոց պատրիարքարան.

«Կեդրոնի կառավարութեան կողմէ տրուած հրամանները դեռ ոևէ արդիւնք չտուին: Ընդհանուր կացութիւնը հետզհետէ կը ծանրանայ: Սպարկերտի գիւղերը նոր յարձակումներու և թալաններու ենթակայ են: Կարճկանի Գոմս գիւղացի երկու հայեր սպանուեցան: Արուանց և Նոր գիւղերու խոտերու դէզերը այրուեցան: Բէլուի և Նանձկանցի ժողովուրդը իրենց ապրուստը հայթայթելու անկարող են: Ապահովութիւն պահանջելու համար Վան եկայ»:

Բիթլիսի առաջնորդ Սուրէն վ. հետևեալ հեռագիրն է տուել Կ. Պօլսի ազգ. պատրիարքարանին սեպտ. 14-ին.

«Խոյթի ամբաստանեալ ոճրագործները ազատ արձակուեցան: Ախլէաթի Թէրսոր հովիտին մէջ Միսակ վիրաւորուելով գոյքերն յափշտակուեցան»:

Մուշի առաջնորդ Ներսէս եպ. Խաբախեանը հետևեալ հեռագիրն է խփել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին.

«Քանի մը օրուան մէջ Խոյթի աւազակները Սասունի մէջ կողոպտած են հայ ճամբորդներու չորս ձի ապրանքները։ Ղազարը սպաննեցին։ Ճամբաներն անապահովութեան մէջ են և ժողովուրդը յուզման մատնուած է»։

—

Մուշէն Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանն ստացել է հետևեալը՝ հեռագրված սեպտ. 13 ից.

«Հին բէժիմին, շրջաններէն Մուշ եկած առեննիս, քիւրդերու կողմէ մեր էսնաֆէն քանիներ կողոպտուեցան և քանի քանիներ ալ սպաննուեցան։ Իսկ սահմանադրութենէն ասդին անդորրութիւնը կատարեալ է ըսելով համարձակօրէն երթևեկութիւններ կատարելով, մեր ապրուստը կը ճարէինք։ Սակայն վերջին այս մէկ ամսուան շրջանին հին վիճակը երևան գալով, մեր էսնաֆէն երկու հոգի Եբու Բէհար ըսուած ձորին մէջ քիւրդերուն կողմէ կողոպտուեցան և մէկ հոգի ալ Էքբուքեարի չէրքէզներուն կողմէ անյայտացուելով, դիակն անգամ երևան չելաւ։ Ասկէ բոլոր էսնաֆները սարսափի ենթարկուեցան և չկրցան դուրս ելլել։ Մեր բազմանդամ ընտանիքներն իրենց վախէն չմեռնելու և մեր անձին ալ պաշտպանութեանը համար կը խնդրենք, որ պէտք եղած դիմումները կատարէք չարագործութեան հեղինակները պատժելու համար։ Ի դիմաց Մշոյ մսավաճառներու՝ պետ Աղաճեան»։

—

Սեպտ. 13-ի երեկոյեան դէմ, պաշտօնական շրջանակներու լուր հասաւ, որ Վանայ զինուորական իշխանութիւնը խիստ կերպով կը հետապնդէ աւազակները, և տեղակալ Բեազիմ էֆ.-ի հրամանատարութեան ներքև գտնուող հեծելազօրաց գումարտակ մը, որ աւազակ Սայիդի հրոսախումբը կը հետապնդէր, քաղաքէն չորս ժամ հեռու աւազակներու կողմէ ծուղակի մը մէջ իյնալով՝ արիւնալի ընդհարումէ մը յետոյ Բեազիմ էֆ. և 10 զինուոր «նահատակուեր» և երկու հոգի ալ վիրաւորուեր են, խոյս տուող աւազակներն ալ խստիւ կը հետապնդուին, ինչպէս կը հեռագրէ օսմ. գործակալութիւնը։ («Բիւզանդիոն»)

—

Էրզրումում հրատարակվող «Յառաջ» թերթը գրում է.

«Երէկ խմբագրատունս այցելեց ճամբորդ մը, որ կը պատմէ, թէ քիւրդերը Ոզիմի կիւրին մէջ սպաննեցին 40 հայ, իսկ քիւրդերէն սպաննուեցան 30 հոգի։

«Ասկէ ետք Բէօօ Հիւսէյնին փաշայի մարդիկը գալով՝ երեք հայ գիւղեր այրեցին։

«Բասէն-Մանծագ գիւղին մէջ քիւրդ մը սպաննուած է, իրենց սահմանէն երկու ժամ հեռու։ Տեղին բէկերու ամբաստանութեամբ՝ անմեղ հայեր ձերբակալուած են։

«Բասէն-Եալվար գիւղի բէկին որդին հայ տղու մը ձեռքով աղջիկ մը կը փախցնէ։ Աղջիկը՝ փախցնող հայ տղային պահանջուած ատեն, բէկի տղան կը յայտարարէ, որ իրեն համար է։ Թշուառ հայուհին այժմ պահուած է, և յոյս չկայ, որ ազատուի բէկի ձեռքէն»։

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԶԷՅԹՈՒՆԻ ՄԷՋ

—

Զէյթունէն մեր ստացած կրկին նամակներէ կը տեղեկանանք, թէ տագնապալի վիճակ մը ստեղծուած է նաև այն կողմերը, ու չէրքէզներն առանց պատասխանատուութեան սկսած են իրենց աւազակութիւններուն, այնպէս որ քիչ ժամանակ վերջ աւելի ցաւալի լուրեր առնելու հաւանականութիւն կայ, որովհետև կայմակամն ամեն բողոքի առջև անտարբեր կը գտնուի, փոխանակ աւազակներուն դէմ խիստ հետապնդութիւն ի գործ դնելու։ Զէյթունի հայ ժողովրդեան ապրուստի միջոցն է խաղողին ցորենի հետ փոխանակութիւնը, երթալով Ալբիստանի և Կոկիսոնի գիւղերը։ Օգոստ. 15-ին խումբ մը զէյթունցիներ Կոկիսոնի կողմը խաղողը ցորենի փոխանակած տուն վերադառնալու պահուն՝ Սէկլէկէն-Բօղազը ըսուած կիրճին մէջ գիշեր ատեն յարձակում կը կրեն խումբ մը չէրքէզներէ, որոնք անընդհատ հրացանաձգութիւն կընեն։ Հայերն անզէն ըլլալով կը փախչին, այն ատեն Եաղուպեան Ասատուր կիյնայ։ Չէրքէզներէն մէկը սուսերամերկ կը յարձակի Աշըգեան Յարութիւնի վրայ, այս վերջինը ինքզինքը կը պաշտպանէ քար մը առնելով և չէրքէզին գլխուն զարնելով։ Չէրքէզը արիւնլուայ կը սկսի աղաղակել, ընկերները նորէն կը սկսին կրակ ընել և կը յաջողին սպաննել Արթինի երկու աւանակները։ Արթին և երկու ընկերները թուփերու ետին պահուելով կազատին։ Քիչ վերջ չէրքէզները՝ յագուրդ տուած իրենց կիրքերուն՝ կը թողուն ու կը հեռանան։

Չէրքէզ գիւղերուն առջևէն անցնող հայ ճամբորդներուն բացէ ի բաց ըսած են, որ՝ «Մենք զձեզ պիտի սպաննենք ու կողոպտենք. մենք ձեր թշնամիներն ենք, դուք խաղող մ' բերէք ու մեր ցորենը մ' տանիք, վազ անցէք մեզմէ»։ Անցեալ օր ալ երեք զէյթունցիներ զատ-զատ չէրքէզ գիւղերու մէջ ծեծուած ու վռնտուած են. այս վիճակը կը շարունակուի և ամեն օր 2—3 հայեր կը ծեծուին ու վիրաւոր վիճակի մէջ հազիւ տուն կը հասնին։ Կառավարութիւնը, որ գիտէ թէ որոնք են չարագործները և ուր կը գտնուին, աչք կը գոցէ սակայն, ու այսպէս կը ստեղծուի կացութիւն մը, որ հետզհետէ ցաւալի կրնայ դառնալ։ Վերը յիշուած աւազակութիւններէն յետոյ չէրքէզներ վերջին օրերս Զէյթունի մօտ Ղըզըլէօզ ըսուած կիրճին մէջ կողոպտած են Հաջի-Կարապետեան Բարսամ աղայի տղան Աւետիսը, ուրուն երկու ոսկին առնելէ յետոյ յափշտակած են նաև երկու ջորիները, 50 ոսկի արժողութեամբ, ու հեռացած են։ Այս չէրքէզներն յայտարարած են նաև, որ ասկէ վերջ պիտի սկսին նոր սպանութիւններու։ Անոնց յայտարարութեանց համաձայն, 50 զինեալ չէրքէզներ անցած են Զավզարի կիրճը ու գրաւած են անցնող ճամբորդ իշապաններուն խաղողները։ Զէյթունցիներուն ապրուստի միակ միջոցը խաղողն է, ու այդ խաղողը արտածելու միակ ճամբան Զավզարի ու Ղըզըլէօզի կիրճերն են։ Հիմա այդ երկու կիրճերն ալ գոցուած են ու ժողովուրդը վարանած՝ չի գիտեր թէ ինչ ընէ։

Կայմակամը եղած դիմումի մը վըրայ, պատասխանած է՝ «Դուք ձեր ըրածը կը քաշէք», ակնարկելով թերևս մէկ քանի փախստականներուն, որոնք կառավարութեան պաշտօնէից ալ ծանօթ են, կուգան անոնց հետ ալ կը տեսնուին եղեր, բայց չեն համարձակիր ձերբակալելու։ Կայմակամին դիմող Աշըգեան Յարութիւն կըսէ. «Ուրեմն ես ալ վաղը յայտնի կերպով պիտի կողոպտեմ ու պիտի սպաննեմ ու անով ապրուստս պիտի հայթայթեմ»։ Կայմակամը խնդալով պատասխանած է. «Դուն ալ գնա, զարկ, առ և ապրուստդ հոգա»։ Ալ այս վիճակին մէջ անդորրութիւնը որքան կրնայ պահպանուիլ՝ յայտնի է։ Արդէն միւս կողմէ կառավարութիւնն ինքն ալ բռնի միջոցներ սկսած է ի գործ դընել. օրինակի համար, Պօշճեան Մկրտիչ անուն անձը իր աղքատ վիճակին պատճառաւ չի կրնար կառավարութեան ունեցած տուրքի պարտքը վճարել։ Օգոստ. 25-ին ոստիկան զինուոր մը կը ձերբակալէ զայն ու կը տանի պաշտօնատուն, ուր քանի մը արաբ ոստիկաններ կը սկսին ծեծել մտրակով, դաշոյնով, այն առարկութեամբ՝ որ իբր թէ կուզէ եղեր փախչիլ։ Տեղւոյն կաթող. փոխանորդ Դարանֆիլեան վարդ. տեսնելով այդ անձին ծեծուիլը՝ կը վազէ կուգայ ու կառնէ ոստիկաններու ձեռքէն։ Քիչ վերջը կը հասնի կայմակամը, որուն կը բողոքուի ոստիկաններուն այս շահատակութեան դէմ, բայց անտարբերութեամբ «Ջահելութիւն մը ըրեր են» կըսէ ու կանցնի։ Եթէ կառավարական պաշտօնատանց մէջ ալ այսպիսի անտարբերութիւն տեսնուի, լեռներու ու կիրճերու մէջ բնականաբար ինչեր չեն պատահիր։ Զէյթունէն այս տեղեկութիւնները մեզ հաղորդողները կը փափաքին, որ գոնէ կեդրոնի կառավարութեան ուշադրութիւնը գրաւէ և արդէն իսկ գոյութիւն ունեցող խնդիրներուն քով Զէյթունի խնդիր մըն ալ չստեղծուի, անպարտաճանաչ և անզգոյշ պաշտօնէութեան երեսէն, որուն օրինակները շատ կան երկրին ամեն կողմը։

(«Բիւզանդիոն»)

ՀԵՏԵՒԱՆՔԸ ՎԱՏ Է

—

Թիւրքահայաստանում գործվող պարբերական ալան-թալանների, հրկիզումների, աւերածութիւնների և սպանութիւնների հետևանքը՝ մասսայական և հանրային կոտորածն է։

Սա փաստ է և հաստատուն փաստ, սկսած այն օրից, երբ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը չար փուշի պէս տնկվեց ֆանատիկ թիւրքերի և քիւրդերի աչքում։

Ամբողջ 32 տարի համիդական արիւնոտ շրջանում՝ բազմաչարչար Հայաստանում քրիստոնեայ տարրը տանջվեց ու տապակվեց։ 1908 թ. այնքան մեծաղմուկ հռչակված սահմանադրութիւնը, որից սպասում էինք ընդհանուր հաւասարութիւն, կեանքի և գոյքի ապահովութիւն, ոչ մի փրկարար ազդեցութիւն չունենալով հանդերձ՝ բարդեց մեզ վրա անակնկալների մի շփոթ։ Եւ ներկայումս՝ իթթիհադականների տապալումով երբ Դանիշների պէս շովինիստների ձեռքն է անցնում օսմանեան պետութեան ներքին գործերի կառավարութեան ղեկը, դարձեալ նոյն ցաւերի ու վշտերի, նոյն կողոպուտների և սպանութիւնների անվերջ շարանն է, և դարձեալ օրէ-ցօր սպառնում է հանրային կոտորած՝ նման 1895—96 թւականների։

Թող հազար անգամ էլ Կ. Պոլսի ազգային ժողովն ու պատրիարքն իրանց բողոքներով, իրանց կարուկ քայլերով և սպառնալիքներով դիմեն, աղաչեն ու պաղատեն, անօգուտ և ապարդիւն է։ Նոյն սովորական խոստումները, նոյն փափկանկատութիւններով կակուղ բարձեր պիտի դնեն նրանց գլխին։ «Էլիաս գիտէ իւր գեաս»։ Թիւրք կառավարութիւնը մազաչափ անգամ չէ շեղվում իր նպատակից, իր ընտրած քաղաքականութիւնից։ Ինչ որ լինելու է, այն կը լինի։ Ծանրճը փփրում է, ծովը ալեկոծվում։ Եւ այդ բոլորը մեզ համար։

Միայն լրագրական, հեռագրական լուրերը չեն, որոնք սարսափեցնում են հայրենիքից հեռու վտարանդի հային, այլև նամակներից մենք լսում ենք ներկայումս Վանի, Բաղէշի, Մուշի և այլ շրջաններում տեղի ունեցած մի շարք խժդժութիւնների մասին։ Վանում, քաղաքից Այգեստան գնալը վտանգաւոր է. թիւրքերը գաղտագողի դարանամուտ են լինում, հայ երիտասարդներին բռնում, կողոպտում և սպանում...։ Իսկ մի առանձին սպանութիւններ եղել են մօտիկ արուարձանների շրջաններում։

Ալեկոծվում, յուզվում է Վանն իր լայնածաւալ գաւառներով, և այս վտանգաւոր ժամանակին՝ կասկած չը կայ, որ պաշտպան երիտասարդները եթէ դիմեն զէնքի, ապա կատարեալ կը լինի եղեռնական թատերաբեմը, դարձեալ կրակ ու սուր։ Եւ անաբեկված ժողովուրդը յուսահատված պիտի թողնէ տուն ու տեղ և, դժոխքից ազատվելու յոյսով, դիմէ գաղթականութեան։

Իթթիհադականների անոտի յոյսերով քաղցր քուն մտան մերոյինները և, փոխանակ թև ու թիկունք լինելու ազգային պատրիարքարանին, բռնեցին խոտորնակ ուղի։ Իթթիհադականները շօշափելով մեր ներքին թոյլ կողմը՝ նենգամիտ քաղաքականութեամբ վարվեցին, և արդիւնքն այս եղաւ։ Իթիլաֆականները տապալեցին իրանց հակառակորդին, և աւելի վատացաւ հայերի անապահովութիւնը։ Նրանք կամ անզօր են կառավարելու երկիրը կամ միտումաւոր է նրանց գործելակերպը։

Անցեալ յուլիս ամսում գտնվելով Վանում՝ ես լաւ շօշափեցի տեղական կառավարութեան բռնած խուլ ու համր վարմունքը. յիշում եմ և այն խօսքերը, որ նորերս պաշտօնանկ եղած վալի Իսմայիլ Հակկը-բէյը սահմանադրութեան տարեդարձի առիթով մերժելով կուսակցութիւնների շնորհաւորումը պատասխանեց. «Քաղաքական ոչ մի կուսակցութիւն չեմ ընդունիր»։ Եւ այսօր ահա իրականանում է՝ ասպարէզը թողնելով մի կարգ ոճրագործ Մզտօների, Շիւքրիների, Սաիդների, Միր-Մհէների և այլոց։

Այլևս ճար չը կայ. դանակը ոսկորին է հասել. պէտք է միահամուռ պաշտպանութեան դիմել, ամբողջ ժողովրդով կանգնել վտանգի առաջ, բաղխել եւրոպական մեծ պետութիւնների դռները, գլխաւորապէս Ռուսաստանի՝ որպէս սահմանակից պետութեան։ Ռուսաստանը նկատի կունենայ բազմաչարչար ժողովրդի կացութիւնը, մանաւանդ որ ներկայումս Ռուսաստանի ապրանքը արտահանվում է Վանի, Բաղէշի, Մուշի, Էրզրումի և Դիարբէքիրի շուկաներում։ Իգդիրից Վան տարվող ճանապարհն էլ վտանգված է։ Ասում են, որ մօտ օրերումս գնացող հայերից կան սպանվածներ և կողոպտվածներ։

Արդեօք այս խժդժութիւնների շարքը մի տեսակ խաղ չի լինի երկու կուսակցութիւնների շէֆերից սարքված ու մտածված, եւրոպացիների դէմ ունեցած ատելութեան թոյնը թափելու հայերի գլխին, զզուեցնելու և վտարելու երկրից, հող պատրաստելու մահմեդականների ապագայ գաղթականութեան համար։

Շատ հեռու չէ այն ապագան, որ Եւրոպական Թիւրքիան բոլորովին կորցվելու է։ Ուրեմն այդ շրջանի մահմեդական տարրը շուտ պիտի գայ դէպի հայկական գաւառները։ Կառավարութիւնը այժմվանից հող է պատրաստում, ոյժով թէ դրամով լինի, նոյնիսկ յափշտակութեամբ խլել հայերից հողեր և բաժանել նրանց։ Փաստեր շատ կան։ Համիդեան ամբողջ շրջանում հայերի վզին նստեցրին Արևելեան Ռումէլիից, Կովկասից գաղթած մահմեդականներին, որոնք ցաւ ու պատիժ դարձան մեր գլխին, և անտէր ու անպաշտպան մըղկտացինք այդ ցաւերով։

Վերջապէս հետևանքը վատ է։

Գ. Շէրենց

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 13 սեպտեմբերի

Արշարունի պատրիարքի հրաժարականը պէտք եղած տպաւորութիւնը առաջ չբերաւ կառավարական շրջանակին մէջ։

Պատրիարքին հրաժարականը Բ. Դրան չհաղորդուեցաւ դեռ, սպասելով վարչութեան նոր ընտրութեան, որ Բ. Դրան պիտի ծանուցուի պատրիարքին միջոցաւ։

Թիւրք մտայնութիւնը սակայն կը գործէ և թիւրք մամուլին լեզուն իսկ բաւական է որոշ կերպով գաղափար տալու, թէ Իթթիհատ ու Իթիլաֆ հաւասարապէս կը մնան թիւրք։

Ինչպէս երբեմն Դուրեան պատրիարքի հրաժարականը իշխանութեան վրայ գտնուող իթթիհադականները վարկաբեկ ընելուն համար մեծ ցաւ պատճառած էր իրենց և երբ բողոքի հանդիսաւոր ցոյց մը՝ ամեն բան ըրին զայն ետ առնել տալու համար, այնպէս ալ հիմա իթիլաֆականներն են որ դժգոհութեամբ կը խօսին Արշարունի պատրիարքի հրաժարականին վրայ, երբ հանդիսաւոր բողոքի ցոյց մը արդէն կառավարութեան դէմ։

Շատ ցաւալի է սակայն տիրող մտայնութիւնը, մանաւանդ կասկածով վերաբերուելու այն տրամադրութիւնը, որ բոլոր թիւրքերն ալ ցոյց կուտան։ Լութֆի Ֆիքրի, որ իթիլաֆականներու ամենէն նշանաւոր դէմքերէն մէկն է, Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմում ընել և օգնութիւն հայցելն Ռուսիոյ միջամտութիւնը հրաւիրելու փորձ մը մեկնած էր և այպանած ու գոհունակութիւն յայտնած էր, որ ազգային ժողովին մէջ այս առաջարկը ընդունելութիւն չէր գտած։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԻՒՂԻՑ *)

—

Քարահունջ

Գորիսից 5 հոգով գնում էինք Քարահունջ գիւղը, որը գտնվում է Գորիսից դէպի հարաւ, 3 վերստ հեռաւորութեան վրա։ Մեր ճանապարհը անցնում է թթենի և կեռասի բաղերի միջով, որոնց ծառերը ճանապարհի աջ ու ձախ կողմից իբր պարիսպ բարձրանում և գեղեցիկ ծառուղի են կազմում։

Շուռ-շուռ մեզ պատահում էին խաղողով բեռնաւորված գրաստներ, որոնք Դաւութթուի և այլ բաղերի խաղողն են կրում ծախելու և կամ գինի պատրաստելու։

Փայտով և ածուխով բեռնած էշերն ու ձիերն էլ մի կողմից քիչ չէին մեզ ստիպում մի կողմ թեքվել, ճանապարհ տալ անցնելու։ Տէրերի «խաբարդա» կանչերն էլ մարդու ականջ է ծակում։ Առաջ անցանք և հասանք Ղափան տանող խճուղուց Քարահունջը բաժանվող ճանապարհը։ Ընդամենը մի քանի րոպէ այդ ճանապարհով վեր բարձրացանք, և ահա գիւղի գերեզմանոցն ու գիւղը մեր առաջ։

Եւ որքան քաղցր է ամիսներ և տարիներ շարունակ քաղաքում թմրած, ընկած գրութիւնից յետոյ՝ ոտով որևէ մօտիկ մի տեղ այցելութեան գնալը, մանաւանդ ասում, խօսում, կենսունակ ընկերների հետ միասին։

Մտանք գիւղը։

Աղքատ, շատ աղքատ տեսք ունի գիւղը. ունևորների մի քանի տներ են միայն աչքի ընկնում, որոնք ունեն իւղաներկ պատեր և թիթեղեայ ծածկ։

Փողոցները նեղ, փոշոտ և խորտուբորտ են։ Գիւղը մտնող երկու մեծ ճանապարհ կայ. մէկը Ուշթափայի կողմից, իսկ միւսը յիշածս խճուղուց սկսած։ Երկու ճանապարհներն էլ քիչ աշխատանք թափելուց և կանոնաւորելուց յետոյ պէտքական կը լինեն և սայլերի համար։ Այդ ճանապարհները շինել է գիւղական համայնքը։

Մենք առաջ անցանք և շուտով կանգ առանք նոր շինվող, երկյարկանի և հոյակապ դպրոցի առաջ։ Հրաշալի և գեղեցիկ տեսարան մարդու առաջ։ Շինութեան մօտ, շուկայում նստած զրոյց են անում, գիւղի ցաւերից խօսում ծերերը, իսկ վարպետները շարում են քարերը ուրախ և զուարթ տրամադրութեան տակ։

Մեզ շրջապատեցին գիւղացիք. շինութեան հսկող գիւղական ներկայացուցիչ Գալուստ ապէրը մեզ ցոյց տուաւ բոլոր սենեակները և ասաց, թէ որ սենեակը ինչի՛ է ծառայելու։ Շէնքը ունի և թատրոնական դահլիճ։

Երեքից չորս տարի է որ Քարահունջի հասարակութիւնը միտք է յղացել դպրոցական սեփական շինութիւն ունենալ։ Հասկանալով անյարմար, անպէտք և վարձու նեղ ու խոնաւ բնակարանների տուած վնասները, բանիմաց տարրը ծխական ժողովով որոշում է սեփական շէնք ունենալ և ձեռնարկել շինութեան։ Գաղափարը կար, և մնում էր որ գործը սկսվէր։

Եւ ահա անցեալ տարի գիւղացիք ընտրելով իրանց վերոյիշեալ ներկայացուցչին և ուսուցչին՝ ուղարկում են Բագու օգնութիւն, օժանդակութիւն խնդրելու՝ աշխատող երիտասարդութիւնից և գլուխ բերելու դպրոցի շինութիւնը։ Երիտասարդութիւնն էլ իր հերթին պատրաստ լինելով և սպասելով այդ ձեռնարկութեան առաջին քայլին, իր նեղ և սուղ միջոցներից անգամ բաժին է հանում այդ ժողովրդական, մեծ և ցանկալի հիմնարկութեան շինութեանը։ Ոչինչ չեն խնայում նրանք. տասը րուբլի ստացողն անգամ իր լուման է ձգում այդ շինութեան գանձարանը։

Բագւաբնակ քարահունջեցի հարուստներ Հայրապետեանները և Մատուրեանները (Առաքել-ապէր Մատուրեանի եղբօր որդիքը) տեսնելով գիւղական հասարակութեան այդ սիրելի ձեռնարկութիւնը՝ իրանք էլ իրանց հերթին խոշոր նուիրաբերութիւն են անում։ Մէկը վճարում է վարպետների և կրի ու քարի վարձը, իսկ միւսը տալիս է ամբողջ տախտակեղէնն ու փայտեղէնը։

Փառք և պատիւ Քարահունջի հասարակութեանը, բագւաբնակ երիտասարդութեանը և ունևոր բարերարներին, որոնք համերաշխ գործունէութեամբ գիւղին տալիս են մի գեղեցիկ հիմնարկութիւն, դպրոց։

Շինութիւնը երկու հարկից է, ունի տասներկու սենեակ, ուր կարելի է պահել դպրոց, գրադարան, իսկ մի մասում մինչև իսկ շտեմարան և գեղատուն։ Գիւղացիք բոլորն էլ աշխատում են շինութիւնը շուտով վերջացնել. դպրոցը բոլորովին պատրաստ կը լինի մինչև յունվար։

Ամբողջ գիւղի մէջ աշխատանքը բաժանված է. հասարակութիւնը բաժանված է տասնեակ խմբերի, որոնցից իւրաքանչիւրը իր հերթին որոշ աշխատանք է կատարում։ Ահա մի գիւղ, ուր համայնական աշխատանքի գաղափարը երևում է, իրագործվում է։

Մօտենում ես աշխատող բանւորին, նա թաց քրտինք մտած աշխատում է։ Հարցնում ես.

— Բարի օր ձեզ։ Հը՛, օրական որքան են քեզ փող տալիս։

— Աստուծոյ բարին։ Փող չենք ստանում. այսօր հերթը մերն է,—պատասխանում է նա քրտինքը սրբելով։

Որքան քաղցր է համայնքի համերաշխ գործակցութիւնը. ի զուր չէ ասված, որ գիւղն ուզենայ, գերան կը կոտրի։

Դպրոցը կառուցվում է գիւղից ցած գտնվող հին գերեզմանատան տեղը, ձորին կպած. ունի ընդարձակ բակ, ուր կարելի է մրգատու ծառեր տնկել և գեղեցիկ պարտէզ պատրաստել։ Շինութիւնը վերջացնելուց յետոյ, ինչպէս լսեցինք, մի սառնորակ աղբիւր էլ բերելու են դպրոցի բակը։ Շինութեան ամբողջ ծախքը հասնում է 28—30 հազար րուբլու։

Դպրոցի շինութիւնը իր աշխատող բանւորների և վարպետների հետ նկարելուց յետոյ՝ գիւղամիջի ճանապարհով բարձրացանք դէպի եկեղեցին։

Եկեղեցու անունը ս. Հռիփսիմէ է, շինված 1675 թ.ին։ Եկեղեցին անշուք է և պատերը ծածկված փոշու հաստ շերտով։

Եկեղեցու բակում, արևմտեան կողմում թաղված է բարեգործ Առաքել Մատուրեանը, որի գերեզմանը ունի տապան հետևեալ մակագրութեամբ.

«Առաքել ապէր Մատուրեան. 1830—1903՝ Ողորմութիւն և հաւատք ի սմանէ ոչ պակասեցան»։

Տէրունի քահանան մեր ուղեկից Մատուրեան երիտասարդի ցանկութեամբ հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ Առաքել-ապօր համար, որը մեր ուղեկից Մատուրեանի հօրեղբայրն էր, և օրհնեց նրա շիրիմը։

Ներկայ մի ուսուցիչ էլ, օգտվելով ժողովրդի ներկայութիւնից, հակիրճ կերպով բացատրեց առհասարակ բարեգործութեան գաղափարի վեհ նշանակութիւնը և խրախուսեց ամեն միջոց գործ դնել, դպրոցը շուտ կառուցանել և այդ շինութեամբ ու նրա պայծառ ապագայով միայն գիւղը փրկված համարել տգիտութեան ճանկերից, խաւարից և ապականութիւնից։

Հասարակութեանը մնաք բարով ասացինք և ընդամենը մի երկու ժամվայ հիւրընկալութիւնից և գիւղը ման գալուց յետոյ դարձանք դէպի Գորիս։ Մտանք մի գեղեցիկ պարտէզ, ուր մեզ սպասում էին ուղեկից Մատուրեանի բարեկամները՝ թէյով և հաշով՝ ճանապարհ դնելու։

Գիւղը անյայտացաւ, անյայտացան և թորշոմած, կնճռոտ հարուստ դէմքերը։

Քարահունջը այս տարի մեծ վնաս է կրել։ Երևակայել Երևանը առանց բամբակի և խաղողի կամ Քարահունջը առանց պտուղների և թութի՝ այդ միևնոյն դժբաղդութիւնն է։ Աղքատ դասակարգի ապրուստի միակ աղբիւրը, օղին, այս տարի չը կայ։ Նա իր օղին փոխարինում էր ցորենով, արտահանում Գորիս, Շուշի կամ Բագու ծախելու։ Սակայն այս տարի նա կարօտ է մի հատիկ թութի անգամ, մի հատիկ խնձորի, կեռասի, տանձի և այլն։

Ապրում է ներկայումս Քարահունջը՝ իր յոյսը դրած Բագուի փողին, երիտասարդութեան աշխատանքին։

Այո, գիւղը իր գիտակից տարրերով և ուսումնասէր երիտասարդութիւնով հրաշքներ կարող է անել. և այդ մենք տեսնում ենք մեր աչքով. գործ կայ, ժողովրդական համայնական աշխատանքը իր գեղեցիկ սկզբունքներն անդաւաճան առաջ է տարվում, և շուտով պսակվելու է այդ գաղափարը դպրոցական շինութեան աւարտումով։

Որքան մենք կարճ մնացինք Քարահունջում, որքան քիչ խօսեցինք նրանց հետ, սակայն շատ ուրախ և զուարթ տրամադրութեամբ հեռացանք գիւղից այն յուսով, որ մեզ հրաւիրելու են մի քանի ամիս յետոյ ներկայ լինելու և դպրոցի օրհնութեան հանդէսին։

Գի՛ւղ, դարեր շարունակ փորել, փորփրել ես մի կտոր հաց ճարելու նպատակով կարծր հողը, դարեր շարունակ աղի քրտինք ես թափել, բայց ունայն և անմխիթար վիճակում ես քարշել գոյութիւնդ։ Այժմ վառ պահիր քո սրտում գիտութեան լուսատու ջահը, լուսաւորիր մթոտած տանդ անկիւնները ուսման լուսով, և կապրես, շատ կապրես դու, գի՛ւղ։

Սաղանդարեան

---

*) Տես «Մշակ» № 186.

Ուրեմն մեր Թիւրք հայրենակիցները կուզեն, որ խեղդուինք անտրտունջ և առանց նոյնիսկ օգնութեան աղաղակ մը բարձրացնելու։

Ասիկա ահա բուն Թիւրք ըմբռնումն է։

Փոխանակ մեզի չդնելու այնպիսի վիճակի մէջ, որ օգնութիւն աղաղակելու պարտաւորուինք, շարունակ զմեզ կը նեղեն, կը հարստահարեն, կը բռնաբարեն, և երբ ձէն մը բարձրացնենք այս ամենուն համար բողոքենք, անմիջապէս մեզի կամբաստանեն, թէ պետութեան դէմ կը դաւենք։

Թիւրք հասարակութեան մեծ մասին մէջ հայկական հարստահարութեանց մասին ազգին բողոքներն արդէն թշնամական ոգւով մը կը մեկնուին։ Տակաւին Թիւրք մամուլն այս կերպով չարտայայտուեցաւ, սակայն շատ չանցնիր գուցէ, ան ալ կը սկսի միևնոյն թմբուկը զարնել։

Բազմաթիւ Թիւրքերու հետ առիթ ունեցանք տեսնուելու վերջին օրերս, ամենքն ալ գրեթէ մասնաւոր կարգախօսէ թելադրուած ըլլալու պէս՝ հայոց բողոքն ու դժգոհութեան ցոյցերը պատեհապաշտական մը ու բաղդախնդրական ձեռնարկներ կը մեկնեն։

Անոնք կըսեն, թէ որովհետև եւրոպական դիւանագիտութիւնը Բալքանեան ազգութեանց վիճակին դարման տանիլ և կարգ մը առանձնաշնորհներ տալու թելադրութիւններ կընէ Թիւրք կառավարութեան, դուք ալ առիթէն օգուտ քաղելու համար աղմուկ կը հանէք, դուք ալ առանձնաշնորհներ ստանալու համար։

Այս գաղափարը կրնայ մեզի համար աղէտաբեր հետևանքներ ունենալ, վասնզի ասիկա կը նշանակէ, թէ անոնք հիմա ակռայ կրճտացնելով է որ կունկնդրեն հայոց բողոքները, և եթէ երբէք օր մը հասնին այն վիճակին, որ մեզի հետ մինակ մնան, գուցէ չարաչար վրէժ լուծեն իրենց նեղ օրերուն մէջ անհանդիստ ըրած ըլլալնուս համար։

Այս պայմաններուն մէջ՝ ազգային ժողովը վտանգաւոր խաղ մըն է որ կը խաղայ, և երբեք ներելի չէ որ անգոյ ուժերու վրայ հիմնուած՝ պոռոտախօսութիւններ ըլլան։

Ընդհակառակը՝ կը տեսնուի, թէ մեր երեսփոխանները, անտրամաբան ամբոխին ծափերուն գոհենիկ մուրացականները, շատ անգամ կըլլան այնպիսի յայտարարութիւններ, զորս խուժանավարները պիտի վարանէին ընելու։

Օրինակի համար՝ երևակայեցէք աւելի քան եօթնասուն տարիներու բեռն ուսերուն վրայ կրող Հմայեակ եպ. Դիմաքսեան, որ առնուազն 40 տարիներու ալ ազգային կեանքի փորձառութիւն ունեցած է, երկու անգամ է, որ բեմերու վրայ, առանց կշռելու իր խօսքերուն հետևանքը, կը յայտարարէ, թէ հայերը պէտք է պահանջեն 61-րդ յօդուածին գործադրութիւնը։

Միայն՝ այս ծերունի եպիսկոպոսը, երբ այս խանդավառող խօսքերը կսէ, չըսեր, թէ արդեօք միայն պահանջելը բաւական է և թէ մեր այս պահանջումը իրագործելու համար ինչ միջոցներ ունինք։ Արդեօք կը մոռնայ Հմայեակ եպ., 1878-էն մինչև 1908 թ., ազգին կատարեալ նահատակութիւնը այդ չարաղէտ 61-րդ յօդուածին գործադրութիւնը պահանջելնուս համար։

Ասիկա ողորմելի խուժանավարութիւն մըն է, որ բնաւ ներելի չէ Հմայեակ եպիսկոպոսի պէս սպիտակահեր ու փորձառու եկեղեցականի մը համար, որ իրաւ է որ կը խանդավառէ ժողովուրդը, սակայն կրակի հետ խաղալու կը մղէ զայն, օգտուելով իր անպատասխանատու հանգամանքէն... մինչ մենք գիտենք, թէ երբ գործը իր սեփական կաշիին վրայ է, որքան զգոյշ է և շրջահայեաց։

Սպիտակահեր խմբակէն պ. Պարգև Փափազեան նաև երկու անգամ է, որ արտառոց գաղափարներ կը յայտնէ, իր կոկորդին բոլոր ուժովը պոռալով թէ՝ «եթէ պատրիարքը կը հրաժարի, ազգային ժողովը կայ, և եթէ ան ալ անկարող ըլլայ բան մը ընելու, ժողովուրդը կայ»։ Պր. Պարգև Փափազեան ուրեմն ժողովուրդը ապստամբութեան կը հրաւիրէ։ Ասիկա պարզապէս պոռոտախօսութիւն մըն է և անտեղի, վասնզի անզէն ժողովուրդ մը ապստամբութեան գրգռելէն չգրգռելն աւելի մեծ առաքինութիւն մըն է։

Դժբաղդաբար այս նրբութիւնները նկատի առնող մարդիկ չկան ազգային ժողովին մէջ։ Ընդհակառակը՝ մեր երեսփոխաններէն շատերը ազգին սրտին այսքան մօտիկ ցաւի մը վրայ խօսելու համար մասնաւոր տենչ մը ունին և ամբոխավարութեան մէջ իրար գլել անցնելու համար ամեն ջանք ու ճիգ կը թափեն։

Ունկնդիր զգացուած ժողովուրդը, յաճախ առանց հասկնալու նշանակութիւնը և իմաստը, կը ծափահարէ զիրենք, և ասիկա... արդէն իրենց լաւագոյն վարձքն է։

Հակառակ անոր, որ գործին փափկութիւնը ժողովին դռնփակ ըլլալը կը պահանջէր, այս խուժանավարները կուզեն, որ անոնք հրապարակաւ կատարուին։ Բ. Դուռը անշուշտ կը հետևի այս ամենուն, և շատ կասկածելի է, որ կարենայ մարսել այս հակառավարական յայտարարութիւնները։

Մեր սկզբունքը մէկ կրնայ ըլլալ և ոչ թէ երկու։

Մեր պահանջն ալ ուղիղ ու շիտակ և ուրիշ բան չէ, եթէ ոչ կեանքի, ինչքի և ստացուածքի ապահովութիւն։

Ներսէս պատրիարք սուլթան Համիդը, Ռուսիոյ և բոլոր Եւրոպայի հանդէպ զանազան լեզուներ գործածելով և այս իրարու հակառակամարտ ուժերը շահագործել փորձելով բոլոր գործը վիժեցուց, մինչդեռ թերևս անկեղծ քաղաքականութիւն մը տարբեր եզրակացութեան մը պիտի հասցնէր զմեզ։

Շաւարշ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍԸ

(Սեփ. հեռագիր)

Մոսկվա, 20 սեպտեմբերի

Այսօր Երմոլովը բաց արաւ ոչխարաբուծական ցուցահանդէսը՝ արտասանելով ճառ, որի մէջ մատնանշեց ոչխարաբուծութեան նշանակութիւնը։

Կակուղ և կոշտ բուրդ ունեցող ոչխարների ու այծերի քանակն է 1800։

Կովկասեան մասը բաւական լաւ է կազմակերպուած։ Հանդէս են բերված կովկասեան 20 տեսակի ոչխար ու այծ։

Անդրկովկասի և Հիւսիսային Կովկասի ներկայացուցիչները սեպտեմբերի 19-ին և 20-ին ունեցան խորհրդակցական ժողովներ Ալ. Քալանթարի նախագահութեամբ։ Յիշեալ ժողովներին քննվեցին մի շարք հարցեր կովկասեան ոչխարաբուծութեան վերաբերեալ։

ՅՕԳՈՒՏ «ՊԵՊՕՅԻ» ԱՐՁԱՆԻ

Ստացանք տիկ. Զ. Զ.-ից 10 րուբլի՝ Մինչև օրս հաւաքված 492 ր. 20 կ.-ի հետ միասին (Տես «Մշակ» № 208) ստացած ունենք ընդամէնը 502 րուբ. 20 կոպ.։

ՀԱՋԻ ՋԷՅՆԱԼ ԱԲԴԻՆ ԹԱՂԻԵՎԻ ԵՒ ԻՆԺ. ԲԵԲՈՒՏՕՎԻ ԳՈՐԾԸ ՅԵՏԱՁԳՎԱԾ

Ինչպէս յայտնի է, 1912 թւի մարտի 11-ին Բագուի նահանգական դատարանը քննելով Հաջի Ջէյնալ Աբդին Թաղիևվի և ինժ. Բեբուտովի աղմկայոյզ գործը՝ դատապարտել էր 70-ամեայ Թաղիևվին $2^1/_2$ տարի կալանաւորութեան՝ զրկելով բոլոր արտօնութիւններից և չքանշաններից։

Նրա հետ դատապարտված էին և Նրա Սադըղ որդին, ազգական Մամէդ Բղա, պոլկովնիկ պրինց Մանսուր Միրզա-Կաջար, շտ.-րոտմիստր Մամէդբէկով, Բագուի քաղաքային դումայի նախկին ձայնաւոր Հասան աղա Հասանով և Թաղիևվի ֆաբրիկայի դիրեկտոր Ջաֆարով։

Մեղադրեալների բողոքի համաձայն այդ գործի քննութիւնը նշանակված էր Թիֆլիսի դատաստանական պալատում սեպտեմբերի 21-ին, երէկ։ Ժամը 10-ին բաւականին հասարակութիւն էր հաւաքվել։ Մուտքը տոմսակներով է, աթոռները գրաւված են երկսեռ հանդիսականներով։ Առաջին շարքում նստել են ի միջի այլոց էքսպերտները։

Մամուլի ներկայացուցիչների համար յատուկ տեղ էր յատկացված ձախ կողմում, որի շուրջը բոլորվել են թէ տեղական և թէ մայրաքաղաքի թերթերի ներկայացուցիչներ 15-ից աւելի։

Դիմացը նստած են վանդակից դուրս շարքով մեղադրեալները և նրանց պաշտպանները։

Ժամը 10-ից քառորդ անց ներս են մտնում դատաւորները, և նիստը յայտարարվում է բացված։

Նախագահում է Օրլովսկի, անդամներ՝ Բուրմենսկի և Մակարով։

Դատախազը՝ նահանգ. դատ. դատախազի օգնական Կորալեվ։

Մեղադրեալներին պաշտպանում են՝ Կազարինով, Զամբրժովսկի, Վանսովիչ և Մալինսկի։

Ինժեներ Բեբուտովի կողմից քաղաքացիական պահանջը պաշտպանում էին երդ. հաւատարմատար Բարաթով և Ջելենկևիչ։

Կանչված են իբրև էքսպերտներ՝ յայտնի պրոֆ. Կոսորոտով և բժ. Ժիտկով, Սէմենով, Բաղիոնով, Ելիաշվիլի, Լեպլինսկի, Ախունդով և Սուլթանով։

Իբրև վկաներ՝ Բինկեր, Մասլով, Ֆրոլով, Սպէվակո, Ախունդով և Սուլթանով։

Մեղադրեալներից բացակայ են ինքը ծերունի Հաջի Ջէյնալ Աբդին Թաղիէվ և շտաբս-րոտմիստր Մամէդբէկով։

Բացակայում է նաև ինժ. Լիւֆթալի-բէկ Բէբուտով։

Նիստը բացվելուց յետոյ՝ տեղեկացվում է, որ բացակայում են կանչվածներից բժիշկներ Ախունդով և Սուլթանով, որոնք ոչ միայն էքսպերտներ են, այլ և վկաներ։

Բացակայելու պատճառն այն է, որ կոչնագրերը նրանց չեն յանձնել Բագուից հեռանալու և տեղը անյայտ լինելու պատճառով։

Խօսքը վերապահվում է դատախազին։

Դատախազը անհրաժեշտ է համարում բժիշկներ Ախունդովի և Սուլթանովի ներկայութիւնը, որոնց ցուցմունքը հաւասարազօր է էքսպերտների ցուցմունքին, խնդրում է, իբրև շատ կարևոր վկաների, յանձնարարել Բագուի ոստիկանութեանը պարզել նրանց ուր լինելը և կանչել տալ, իսկ մինչ այդ՝ գործը յետաձգել։

Բէբուտովի պաշտպանը համարում է Ախունդովի և Սուլթանովի ցուցմունքը էական, բայց դէմ չէ գործը ներկայ նիստում քննելու։

Մեղադրեալների պաշտպաններ Կազարինով, Զամբրժովսկի, Վանսովիչ—Ախունդովի և Սուլթանովի ցուցմունքը գտնում են արդէն ի նկատի առնված, առաջուց տրված, և որովհետև նոր հանգամանքներ չը կան, նորից կանչելու կարիք էլ չը կայ, ուստի խնդրում են գործը քննել։

Մեղադրեալները համաձայնութիւն են յայտնում քննելու։

Դատարանը ընդմիջում է նիստը և առանձնանում խորհրդակցութեան։

35 րոպէից աւելի խորհրդակցութիւնից յետոյ դատարանը յայտարարում է գործը յետաձգված անորոշ ժամանակով։ Լ. Դ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դարձեալ Թիֆլիս-Վլադիկավկազի երկաթուղու հարցը

Դուշէթ, 15 սեպտեմբերի

Թիֆլիս-Վլադիկավկազեան լեռնանց երկաթուղու գիծն անցկացնելու հարցը (որի մասին գրել էի «Մշակի» № 185-ի մէջ), այսօր մեզանում ամենահրատապ հարց է դարձել, բոլորի ուշքն ու միտքը կենտրոնացած է այդ բանին։ Այդ առիթով քաղաքային վարչութեան շէնութեան մէջ նորից կայացաւ ժողով, ուր խօսվեց, թէ ժամանակ է միջոցներ ձեռք առնել և խնդրել ուր հարկն է, որ գոնէ անպատճառ չորս վերստի վրա անցնի քաղաքիցս և Արագվա գետի աջ ափին (կազմված ծրագիրներից մէկը այդպէս է) և այդքան տարածութեան վրա էլ շինվի կայարան (ծրագրված է աւելի հեռու)։ Ընտրվեց պատգամաւոր, տրվեց ժողովականների կողմից ճանապարհածախս և առաջարկվեց գնալ Թիֆլիս և այդ մտքով աշխատել։

Ցանկալի է, որ բարձր իշխանութիւնն էլ ուշադրութիւն դարձնի և գոնէ այս չնչին խնդիրը ի կատար ածէ, որ անպայման առիթ կը դառնար քաղաքիս վերածնութեան։

Իմ առաջարկութիւնը (տես «Մշակ» № 185), որով շեշտում էի թէ հնարաւոր և նպատակայարմար էր, որ Կասպի-Մուխրան-Դուշէթով անցնէր գիծը, թողել է մուխրանցու վրա տպաւորութիւն. «Մշակի» այդ համարը ձեռք են բերել Թիֆլիսում և անապաստելի զարթնել են, ու, ինչպէս ինձ հաստատ տեղեկացրին, պատրաստվում են տեղական կայսերական կալուածքների կառավարչի մօտ պատգամաւորութիւն ուղարկել, որ նա էլ պաշտպանի և միջնորդի, որպէսզի այդ միանգամայն լաւ ծրագիրը իրականանայ։

Ամսիս 13-ին այստեղ վերադարձան տեղական բազմաթիւ սայլերով՝ Արագվայի հովտում աշխատող բազմաթիւ ճարտարապետներ, տեխնիկներ ու բանւորներ և գնացին Թիֆլիս։ Միւս մեծ խումբն էլ, որն աշխատում է Թվալինի կողմերը, գալու է մօտիկ ապագայում։

Ինչպէս նրանք ասում են, արդէն վերջացրել են վերջնական հետազօտութիւնը և հաւանական է որ այս առաջիկայ գարնանից սկսվի գծի կառուցումը։

Ցոլակ Ք. Ապրիկեան

Փախստականը կալանաւորված

Զաքաթալա, 17 սեպտեմբերի

Մի քանի օր առաջ քաղաքիցս մի քանի վերստ հեռաւորութեան վրա գտնվող Կատեխ գիւղում կալանաւորվեց՝ նոյն գիւղի տանուտէրի ձեռքով՝ տաժանակիր աշխատանքից փախած մի լեզգի, որը ներկայիս գտնվում է Զաքաթալայի բանտում։ Հաւանականաբար փախստականը կը միանար աւազակապետ Աղիզի խմբին, եթէ նրա բաղդի անիւը չը շրջէր անսպասելիօրէն...

Անսպասելի շոգերից յետոյ անձրևի երես տեսանք, բայց ինչ օգուտ, որ բուսականութիւնը բոլոր խանձվել, փչացել է, տաւարի արածելու ոչինչ չը կայ դաշտերում ու սարերում։ Ամարանոցաւորների մեկնումից յետոյ սկսվեց մեզ մօտ սովորական միապաղաղ կեանքը. ամենքի ուրախութեան ժպիտը փոխարկվեց յուսահատութեան, մելամաղձոտութեան։

Սոյգալէ

Մաղթանք՝ ծխ. դպրոցի բացման առիթով

Շամախի, 16 սեպտ.

Այսօր, պատարագից յետոյ, տեղիս հայոց ծխ. երկդասեան դպրոցի թատերասրահում կայացաւ հանդիսաւոր մաղթանք՝ թեմական առաջնորդի, հոգևորականութեան, հասարակութեան և աշ.-աշակերտուհիների ներկայութեամբ։

Չը նայած աշակերտները սեպտեմբերի 1-ից են արդէն սկսել յաճախել դպրոց, բայց դպրոցի շէնքի վերանորոգութեան պատճառով ուսուցչ. կազմը անկարող էր սկսել կանոնաւոր պարապմունքները, որոնք վաղվանից կը սկսվեն։

Մաղթանքից յետոյ՝ աշակերտները արտասանեցին մի քանի ոտանաւորներ, իսկ քառաձայն խումբը, ղեկավարութեամբ ուսուցիչ Գ. Մելիքեանցի, երգեց մէջընդմէջ չորս երգ։

Թեմակալ առաջնորդը հակիրճ ճառով յորդորեց հասարակութեանը սիրով վերաբերվել դպրոցին և համերաշխ ու միահամուռ ոյժերով աշխատել զարկ տալ նրա բարգաւաճմանը։ Խօսեց նոյնպէս աւագ ուսուցիչը՝ ծնողների պարտականութիւնների և օրինապահութեան ու դիսցիպլինայի անհրաժեշտութեան մասին՝ ինչպէս ամեն մի հաստատութեան, նոյնպէս և դպրոցի համար։

Գագաւոն

ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ *)

II

Եթէ մի թռուցիկ ակնարկ ձգենք մեր գաւառի ժողովրդի տնտեսական դրութեան վրա, կը տեսնենք ոչ մխիթարական մի պատկեր։

Ժամանակակից կուլտուրան, լուսաւորութիւնը չէ ազդել մեր ժողովրդի սօցիալ-տնտեսական պայմանների վրա, և դուք կը տեսնէք մեր գիւղացուն շատ ծանր վիճակի մէջ։

Գիւղերում դեռ ևս գոյութիւն ունեն տզրուկի պէս արիւն ծծող վաշխառուներ, զանազան ճարպիկ խօջաներ և այլ վնասակար տարրեր, որոնք ժողովրդի տնտեսական առաջխաղացութեան հանդէպ կանգնած են որպէս խոչընդոտներ։

Եւ ցաւ ի սիրտ պիտի ասել, որ վերջիններս դեռ փայլում են իրանց դիրքերում, նրանց հեղինակութիւնը դեռ բարձր աստիճանի վրա է։ Նրանք դեռ կարողանում են մի ամբողջ հասարակութեան գործ իրանց ձեռքին պատեցնել։

Պատմեմ մի բնորոշ դէպք։

Մեր շրջանի մի գիւղի վրա տանուտէրը հրամանագրում է, որ գիւղական դատարանի շէնքի համար որոշված փողը ժողովեն։ Նախ քան այս գիւղում հարկահանի գործի անցնելը, գիւղի վաշխառուներից մէկը գաղտնի կերպով սողում է տանուտէրի մօտ և սրան մի բան խոստանալով խնդրում, որ կարգադրէ մի օրվայ ընթացքում փողերը ժողովել, որպէսզի պատրաստի փող չունեցող գիւղացին իրան դիմելուց՝ $30—40^0/_0$-ով փող բաց թողնէ։

Բարեբաղդաբար գիւղացիները շուտ են հասկանում, որ իրանց հետ ի՞նչ են ուզում խաղալ, և բարձր իշխանութեան դիմելով՝ մի քանի օր ժամանակ են ստանում և իրանց միջոցներից գոյացնում պահանջվող գումարը։

Սակայն գիւղացիների այսօրինակ վարմունքը մի բացառիկ երևոյթ է։

Գլխաւորապէս գիւղացիներից բացակայում է այն, որ նրանք չեն կարողանում գառան մորթի հագած գայլերին դիմակազերծ անել, նրանց իսկական հոգին երևան հանել։ Այդ խիզախութիւնը չունի հայ գիւղացին. նա չէ ուզում դուրս գալ իր սովորական կեանքից. նրա աշխարհահայեցողութիւնը շատ նեղ շրջանակի մէջ է գտնվում։

Գիւղացին եթէ ըմբռնում էլ է, թէ ի՞նչ էլեմենտներ են արգելառիթ հանդիսանում իր տնտեսական առաջադիմութեան գործին, դարձեալ գիտակցելով հանդերձ որ հեշտութեամբ կարող է մաքառել դրանց դէմ, յամառում է, լռութիւն է պահպանում։

Գիւղացու այդ լռութիւնից օգտվում են գիւղի համփաները՝ մանաւանդ պետական տուրքերի կամ հասարակական ծախսերի հաւաքման ժամանակ. հարկաբաժանները (Թօվճիքեարներ) այդ համփաներն են. և որքան անխիղճ, որքան զազրելի կերպով են իրանց գործը տեսնում։

Մի խօսքով՝ գիւղերում դեռ ևս չեն չքացել գիւղացու տնտեսութիւնը քայքայող մի շարք հանգամանքներ, և գիւղացին թէ հացը առատ և թէ անբերրի տարում հաւասար դառն կեանք է վարում։

Գիւղացու տնտեսութիւնը բարեկարգելու, նրա դրութիւնը բարեփոխելու գործում մեծ դեր կարող են խաղալ կօօպերատիվ ընկերութիւնները, որոնց բացակայութիւնը մեր շրջանի գիւղերում նկատելի է։

Մանր վարկի ընկերութիւններն են մեծապէս օգտակար դեր խաղացողները, որոնց էական նշանակութիւնը դժբաղդաբար չէ հասկանում մեր գիւղացին։

Արդարև ամիսներ առաջ մեր շրջանի Բալլուջա գիւղում մի քանի երիտասարդների մէջ միտք յղացաւ մանր վարկի ընկերութեան հիմք դնել և սպառողական խանութ բանալ, սակայն ինչ-ինչ հանգամանքների շնորհիւ չաջողվեց։

Բաւական է, որ մի գիւղում այդպիսի ընկերութեան հիմք դրվեց, այնուհետև օրինակը վարակիչ կը դառնայ և միւս գիւղերի համար։

Բալլուջան է մեր գիւղերի մէջ աչքի ընկնողը իր հարստութեամբ։ Այդ գիւղը օտարութեան մէջ հարուստ անդամներ ունի, որոնք՝ մեր կարծիքով՝ աւելի քան տեղեակ պէտք է լինեն իրանց գիւղի կարիքներին, ապա ուրեմն նրանց վրա սրբազան պարտականութիւն է ընկնում ընդ առաջ գնալ գիւղի կարիքներին և նպաստել գիւղերում բարենպաստ հիմնարկութիւններ բանալու։

Գիւղն է այն օրրանը, որտեղ այժմ քաղաքներում երջանիկ կեանք վարող հարուստներն իրանց մանկական անհոգ օրերն անց են կացրել, տեսնելով գիւղական ժողովրդի բիւր ցաւերը, նրա օգնութեան կարօտ լինելը։

Եւ այժմ այդ հարուստներն են, որ պէտք է իրանց ծննդավայրի աղաղակող կարիքներին ընդ առաջ գնան։ Ս. Ասլանեան

Խանքենդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թագաւոր կայսրը բարեհաճեց հետևեալ հեռագիրն ուղարկել Կովկասի Փոխարքային. «Յանձնարարում եմ ձեզ, Կոմս, հաղորդել եկեղեցի վագոնի օծման ներկայ եղողներին Իմ շնորհակալութիւնը Ինձ արտայայտած հաւատարմութեան համար։ ՆԻԿՈԼԱՅ»։

◆ Սեպտ. 19-ին Թիֆլիս ժամանեց ռուսական օրէնսդրական բարձր հաստատութիւններում Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ սենատոր Նիկոլսկին, որին կայարանում հանդիպեցին նահանգապետ Չերնեավսկին, Փոխարքայի դիւանապետ Պետերսոն։ Սենատորը բնակվելու է պալատում։

◆ Այսօրվանից սենատոր Նիկոլսկիի նախագահութեամբ կը սկսվեն այն առանձին մասնաժողովի նիստերը, որ պաշտօն ունի քննել Կովկասի ազգաբնակութեան հողային յարաբերութիւնների օրինագիծը։

◆ Կովկասի Փոխարքային ներկայացաւ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի օգնական ինժեներ Զուբարեանը։

◆ Կովկասի Փոխարքայի խորհրդի նիստում որոշվեց ամեն տարի 7930 ր. յատկացնել Թիֆլիսում անտառագործական պահեստ հիմնելու և պահպանելու համար։

◆ Թիֆլիսումն են Քութայիսի նահանգապետ Գ. Սլավօչինսկին և քաղաքագլուխ բժ. Չիկօվանին։

◆ Վերադարձաւ Սև-ծովի ափից երկրագործութեան գլխ. կառավարչի կովկասեան լիազօր Արխիպովը։

◆ Ռուսաց կուրեայի կողմից Պետական Դումայի համար պատուիրակների ընտրութիւնները Թիֆլիսում տեղի կունենան սեպտեմբերի 26-ին։ Ընտրութիւններին նախագահելու է քաղաքագլուխը։

◆ Քաղաքային վարչութեան մէջ ամեն օր մեծ թւով բողոքներ են լինում նրանց կողմից, որոնց անունները չեն մտած Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողների ցուցակներում։

◆ Այսօր, Թիֆլիսի Հասարակական ակումբում իշխ. Գ. Թումանեանը կը կարդայ ռեֆերատ «Մեր օրէնսդրութիւնը վերջին տարիներում» թեմայով։ Ռեֆերենտը նպատակ ունի ծանօթացնել ունկնդիրներին 3-րդ Պետ. Դումայի գործունէութեան հետ և հետաքրքրութիւն առաջ բերել հասարակութեան մէջ դէպի Պետական Դումայի ընտրութիւնները։

◆ Թիֆլիսի ռուսաց եկեղեցիների կողմից Պետական Խորհրդի ընտրութիւններին մասնակցելու համար ընտրվել է Սերգէյ Գորոզցէվ քահանան։

◆ Այսօր քաղաքային դումայից ընտրված մասնաժողովը կը ձեռնարկէ քննելու ծառայողների նորմալ հանգիստը կանոնաւորող պարտադիր կանոնները։

◆ Տեղական ռուս թերթերի ասելով՝ Թիֆլիսում հիմնվել է հայ գրողների ընկերութիւն, որի կանոնադրութիւնը հաստատվել է պատշաճաւոր իշխանութիւնից։

◆ Վաղը նշանակված է Հայոց Հրատարակչական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, ուր ի միջի այլոց տեղի են ունենալու վարչութեան կազմի նոր ընտրութիւններ։

◆ Մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցէվը Պետերբուրգից գալիս է Կիսլովոդսկ։ Նրա Թիֆլիս գալը դեռ յայտնի չէ։

◆ Տեղական ռուս թերթերը տպել են, որ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը վերջնականապէս մշակել և ներկայացրել է ի հաստատութիւն եղբարք Ժամհարեանների գիւղատնտեսական դպրոցի կանոնադրութիւնը։ Առարկաների դասաւանդութիւնը լինելու է ռուսերէն. իսկ ժամանակաւոր դասընթացքների մէջ հասակաւորների համար առարկաները կարելի է աւանդել նաև տեղական լեզուներով։

◆ Այսօր, շաբաթ, Ժողովրդական Տանը Հայկական Սեկցիան կը ներկայացնէ Շիլլէրի «Աւազակներ» ողբերգութիւնը։ Ֆրանց Մօօրի դերը կատարում է Արմէնեանը։

◆ Ինչպէս հաղորդում է «Ս. Ր.»-ի Բագուի թղթակիցը, Բագուի քաղաքագլխի պաշտօնի համար խօսում են դարձեալ նոր թեկնածու՝ Սարատովի զեմստվային յայտնի գործիչ իշխ. Լվովի մասին։

◆ Սեպտեմբերի 15-ին Ղազախ քաղաքում կայացել է տեղական կալուածատէրերի առաջին ընտրողական ժողովը Պետական Դումայի համար լիազօրներ ընտրելու։ Ժողովին մասնակցել են թէ թուրքեր և թէ հայեր. վերջիններս թւով բաւական քիչ են եղել։ Ընտրված են 12 լիազօրներ, որոնցից 11 թուրք և 1 հայ, այն է՝ Ս. Յարութիւնեան, որը ընտրվել է միաձայն։ Պատգամաւորների ընտրութիւնը կը կայանայ սեպտեմբերի 26-ին։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Թեմական ժողովի անհնազանդութիւնը.—Սամարայի առաջնորդ Սիմէօն եպիսկոպոսը առաջարկել է թեմական ժողովին՝ հրաժարեցնել թեմական կառավարիչ Սլբոկրենովին ու ընտրել նորը։ Ժողովը հրաժարվեց կատարել այդ առաջարկը։ Եպիսկոպոսը մտադիր է դատի ենթարկել ժողովի ամբողջ կազմը՝ անհնազանդութեան համար։

◆ Մինիստրների երկաթուղիական տոմսերը.—Պետական վերստուգիչ Պ. Ա. Խարիտոնովը հարց տուեց պետական երկաթուղիների վարչութեանը, թէ ի՞նչ հիման վրա են տալիս մինիստրներին տարեկան անուանական տոմսակներ՝ ուղևորվելու հա-

---

*) Տես «Մշակ» № 208.

մար պետական ու մասնաւոր բոլոր ճանապարհներով։

◆ Նոր բարձրագոյն դպրոց.—Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութիւնը տեղեկացրել է առևտրական ինստիտուտի վարչութեանը, որ առևտրական ինստիտուտի նոր կանոնադրութիւնը մտել է իր ոյժի մէջ սեպտեմբերի 6-ին։ Ուրեմն Մօսկվան հարստացաւ մի նոր բարձրագոյն դպրոցով։

◆ Քահանաների սով.—Սարատովի նահանգի Սերդօբսկ գաւառում քահանաներ չը գտնվելու պատճառով՝ 5 եկեղեցի մնացել են դատարկ, իսկ ամբողջ թեմում 30 ազատ տեղ կայ։

◆ Պ. Կասսօյի կարգադրութիւնները.—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կարգադրել է փակել այս ընթացիկ տարում Նօվգօրօդի կանանց մանկավարժական կուրսերը և բանալ Պետերբուրգի դպրոցական շրջանում երկու ուսուցչական սեմինարիա. կանանցը՝ Նօվգօրօդում և տղամարդկացը՝ Ֆինլանդիայում։

◆ Հոգևոր կօնսիստօրիաների բարեփոխումը.—Սեպտեմբերի 12-ին Պետերբուրգից հաղորդում են հեռախօսով. սինօդի օբեր-պրօկուրօրը որոշել է, վերացնելու համար գոյութիւն ունեցող հին կարգերը կօնսիստօրիաներում, հրատարակել առանձին շրջաբերական։

◆ Ուսանողուհու դրաման. — Վերջերս Մօսկվայում կախվեց գիւղատնտ. ինստիտուտի ազատ ունկնդրուհի Պ. Ե. Ջերեմետինօվան՝ 26 տարեկան։ Իր թողած նամակում նա բացատրում է իր արարքը նրանով, որ ոչ ապրելու միջոց ունէր, ոչ էլ դասախօսութիւնները լսելու անհրաժեշտ գումարը։

◆ Քաղաքային դպրոցներում ընդունելութիւնը.—Մօսկվայի քաղաքային տարրական դպրոցների ընդունելութիւնը վերջացաւ, տալով չը տեսնված թիւ աշակերտների, այն է՝ 25,000 հոգի։ Քաղաքը ստիպված է լինելու բաց անել իր ծայրամասերում 79 նոր դպրոց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Զարեչնիի ռուս դրամատիկական խումբը սեպտեմբերի 18-ից սկսելով իր սէզօնային ներկայացումները Արտիստական թատրոնում՝ առաջին իսկ օրից ենթարկվել է Թիֆլիսի հասարակութեան սառն վերաբերմունքին։

Պէտք է խոստովանել, որ Զարեչնիի խումբը պարունակում է իր մէջ աչքի ընկնող բեմական առաջնակարգ ոյժեր, նորագոյն և Թիֆլիսում դեռ չը խաղացված պիէսներից կազմված րէպէրտուար, ըստ որում ներկայացումները խոստանում են լինել հետաքրքրական, եթէ միայն մեր հասարակութիւնը թողնէ ամեն երեկոյ սինէմատօգրաֆներն յաճախելու սովորոյթը ու իր ներկայութեամբ խրախուսէ Զարեչնիի խմբի խաղը՝ ստանալով նրանից գեղարուեստական և մտաւոր հաճոյք։

Հինգշաբթի, սեպտեմբերի 21-ին յիշեալ խմբի երրորդ ներկայացումն էր։ Խաղացվեց նորերս վախճանված Ա. Ս. Սուվօրինի «Տատիանա Րէպինա» 4 գործող. պիէսը։ Սուվօրինը իր այդ պիէսի մէջ շօշափում է ռուս կալուածատէր հասարակութեան նիստ ու կացը և գլխաւորաբար նրա հայեցակէտը բեմական արուեստին նուիրված կանանց վերաբերմամբ։ Նա նրանց մէջ չէ փնտռում «ռուսական տաղանդը» և չէ խրախուսում այդ տաղանդի զարգացումը, այլ որոնում է նրանց մէջ արտաքին փայլը, գեղեցկութիւնը և իր անյագ կրքերին զոհ դարձնում այդօրինակ տաղանդներին։ Պիէսի ամբողջ առանցքը պտտում է տաղանդաւոր և անուանի դերասանուհի Տատիանա Րէպինայի շուրջը, որը հոգեկան և բարոյական խրախուսանքի չարժանանալով իր շրջապատից՝ թոյն ընդունելով վերջ է տալիս իր կեանքին։ Նրան շարունակ մխիթարողը և յոյս ներշնչողը լինում է միայն Ադաշեվ ազգանունով մի ժուրնալիստ, որը կարողանում է հասկանալ և գնահատել այդ «ռուսական տաղանդը»։

Պիէսը բեմական է, սակայն բովանդակում է իր մէջ միանգամայն աւելորդ գործող անձեր, որոնք ասուպի պէս երևան են գալիս ու անյայտանում։ Սուվօրին, ի միջի այլ գործող անձերի, չէ մոռացել խցկել պիէսի մէջ նաև բացասական յատկութիւններով օժտված հրէական երկու տիպ...

Տատիանա Րէպինայի դերակատար տիկ. Սերգէևա բաւական գեղեցիկ կատարեց իր առանձնած պատասխանատու դերը և արժանացաւ ծափահարութիւնների։

Ժուրնալիստ Ադաշևի դերում Բէլեայեվ, Րէպինայի սիրեկանի՝ կալուածատէր Սաբինինի՝ դերում Տուգանով—աւելի աջող կը լինէին, եթէ դերերնին լաւ սովորած լինէին։

Մնացած դերակատարները իրանց խաղով նպաստեցին ներկայացման մասնակի աջողութեանը։ X.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Տեղեկ ռազմագէտների կարծիքով՝ ներկայ բոպէն ամենայարմարն է բալկանեան պետութիւնների համար պատերազմ յայտարարելու իրանց վաղեմի ու մշտական թշնամի Թիւրքիայի դէմ։ Այլապէս արդէն զէնքի կանչված զօրքերը կը սկսեն յեղափոխութիւն Բուլգարիայում, Սերբիայում, Յունաստանում և Չեռնօգորիայում։

◆ Բ. Դուռը պահանջեց բալկանեան պետութիւններից 24 ժամում բացատրել՝ թէ ինչ նպատակով են ընդհանուր զօրաժողովները։

◆ Աւստրիան և Գերմանիան յայտնեցին բալկանեան պետութիւններին, որ նրանց քայլը անհեռատեսութիւն է։ Միւս կողմից յիշեալ երկու մեծ պետութիւնները վճռել են ամեն կերպ առաջն առնել status quo-ի խախտման Բալկանում։

◆ Բալկանեան պետութիւնների դաշինքը համարվում է Սազօնովի ջանքերի պտուղ։

◆ Պետերբուրգի Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը սանիտարական և գթութեան քոյրերի խմբեր է ուղարկում Բալկան։

◆ Պետերբուրգում հիմնվում է ֆրանսիական ինստիտուտ։

◆ Եւրոպական բոլոր մայրաքաղաքներում, ինչպէս նաև Պետերբուրգում և Մօսկվայում, բօրսաների մէջ բոլոր արժեթղթերի գները ընկան 15—25 %-ով վերջին յուզալի ժամանակի ազդեցութեան տակ։

◆ Վիէննայից հեռագրում են, որ Լօնդօնում պաշտօնավարող աւստրիական դեսպանը գաղտնի հրաման ստացաւ անյապաղ մեկնել Բալմօրալ Գէորգ թագաւորին Ֆրանց-Յովսէփ կայսրի կողմից կարևոր վճիռներ յանձնելու համար, վերաբերեալ բալկանեան առաջիկայ պատերազմին։

◆ Պարիզից ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնովը կը մեկնէ Բեռլին, ուր կը հասնէ առաւօտը. իսկ երեկոյեան ևեթ դուրս կը գայ այնտեղից և կը ճանապարհվի դէպի Պետերբուրգ։

◆ Պարսկաստանում անկարգութիւնները շարունակվում են։

◆ Պետերբուրգում նորից լուրեր են պտտվում, թէ ընտրողական պայքարի տարբեր հասկացողութեան հողի վրա լուրջ տարաձայնութիւն է ծագել մինիստրների խորհրդի նախագահ Կօկօվցէվի և ներքին գործերի մինիստր Մակարօվի միջև։ Տարաձայնութիւնը այնքան լուրջ է, որ իցէ թէ Կօկօվցէվը հրաժարվի. նոյն իսկ իբրև նրա յաջորդ անուանում են երկրագործութեան գլխաւոր կառավարիչ Կրիվօշէինին։

◆ Լուրերի համաձայն Պետական Խորհրդի նախագահի պաշտօնը յանձնվելու է Կօկօվցէվին՝ հիւանդութեան պատճառով հեռացող Ակիմօվի փոխարէն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

20 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բժ. Բէլօրէցկին նշանակվեց գլխաւոր սանիտարական-բժշկական վարչութեան կառավարչի օգնական։

ԿԱԼԿԱԹԱ։ Խօստում նորից անկարգութիւններ ծագեցին։ Աւղանական զօրքերն ու իշխանութիւնները անզօր են վերականգնելու կարգուկանոնը։

ՐԵՎԵԼ։ Ծովի վրա ուժեղ փոթորիկ է ձեան հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նախա-եկեղեցական խորհրդակցութիւնը ցանկութիւն յայտնեց անջատել Սուխումի թեմը վրաց էկզարխութիւնից։

ՄՈՍԿՎԱ։ Բացվեց ոչխարաբուծութեան համառուսական ցուցահանդէսը։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ամառային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից

I Պոստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »

II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »

III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի բուլղարիայի, Մակեդոնիայի, Սիրիայի, Անատոլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Րիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վելիամինովսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են և ապահովագրվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Ն. Սուլխանեանց
(շ.) 0—63

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 Ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին ևնևարգային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերարուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆՆԻԳԵՐ-ԱՐԵՋԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—89

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տելէֆօն № 1175.
(ա.օ.) 377. 100—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՀԱՅ ԱՂՋԻԿ

Սենեկային ծառայութեան համար (горничная). կարող է լինել նաև անփորձ։ Բեհբութեան փող. 24, բնակ. բժ. Իստամանովի։
710. 1—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Մի ֆրեբէլեան կուրսերն աւարտած

ՀԱՅՈՒՀԻ

Նոր-Նախիջևան գնալու համար։ Պայմանների մասին տեղեկանալ Բեհբութեան փող. № 24. բժ. Իստամանովի բնակարանում։
709. 1—1

Կրօնի դասագրքերը

ԲԱՄԱԼԵԱՆ Ս. ԴՊՐԻ

Ա. ՏԱՐԻ «Բարոյագիտական զրոյցներ և Յիսուսի կեանքից պատմուած.», 10 կ.
Բ. ՏԱՐԻ «Նահապետների կեանքից մինչև Յովսէփի մահը», 20 կ.
Գ. ՏԱՐԻ «Մովսէսից մինչև Եղիա», 35 կ.
Դ. ՏԱՐԻ «Մարգարէներ և հրէից ազգի վիճակը մինչև Հերովդէս», 160 էջ. 40 կ.

Դիմել Թիֆլիսի գրախանութներին։
(օ. մ.) 712. 5—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 23-ին, առաւօտեան ժամը 11½-ին, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխական տարեկան ընդհանուր ժողով։

ՕՐԱԿԱՐԳ.

1) 1912 թ. նախահաշւի քննութիւնն ու հաստատումը.
2) Առաքելեանի խնդիրը.
3) Երէցփոխի ընտրութիւն պ. Ց. Ց. Քալանթարեանի հրաժարման պատճառով, մի հոգաբարձուի ընտրութիւն՝ տիկ. Եղ. Արծրունու ժամանակամիջոցը լրանալու պատճառով.
4) Վերստուգիչ Յանձնաժողովի երեք անդամների ընտրութիւն։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն

Ծանօթ.—Այս ժողովը երկրորդը լինելով և աչքի առաջ ունենալով խնդիրների կարևորութիւնը, հոգաբարձութիւնը խնդրում է անպատճառ ներկայ լինել։

708. 2—2

Վ.-Ագուլիսում մի ինտելիգենտ հայ ընտանիքում ՊԱՀԱՆՋՎՈՒՄ է մի գիմնազիստ

ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ

պարապելու մի երեխայի հետ։ Ցանկացողը պիտի տիրապետէ նաև հայ լեզուին։
Պայմանների մասին դիմել՝ Б.-Ванкская, Мельничный пер. № 5. Դաւթեանցին։
707. 2—2

Наша Азбука

Иллюстрированная оригинальными рисунками изъ кавказской жизни и приспособлена для кавказскихъ школъ.
Составили В. С. и Ш. Х.
Цѣна 30 коп.
Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին։
(չ. շ.) 620. 10—9

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են

ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի	50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ.-ի	40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի	60 կ.
4) Էգմօնտ, ողբերգ. 5 գործ., Վ. Գ. Գէօթէի, թարգմ. Հմ. Մաժինեանի	50 կ.
5) Ուսանողներ, 3 գործ, Գ. Բաշինջաղեանի	50 կ.
6) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ, Աւետիք Առաքելեանի (յօգուտ «Մշակի» ֆօնդի)	50 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն միզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%.
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.
(1) 10—2

Ընտրութիւններ Պետական Դումայի համար

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ Թիֆլիսի և Բօրչալուի գաւառների քաղաքային ընտրողների համագումարը նշանակված է—ռուսական կուրիայի համար՝ սեպտեմբերի 26 ին, տեղական-ընդհանուր կուրիայի համար՝ հոկտեմբերի 3-ին։ Ռուսական կուրիայի ընտրութիւնները տեղի կունենան Զուբալօվի անուան Ժողովրդական Տանը, Կիրօչնայա փող. վրա։ Ընդհանուր կուրիայինը—I բաժանմունքի վերաբերմամբ (1, 2, 11 և 12 ոստիկանամասեր և Թիֆլիսի ու Բօրչալուի գաւառների քաղ. ընտր.)—Աշխատանքի Քաղաքային Բօրսայում, Վէրայի հրապարակում. II բաժան. վերաբերմամբ (10, 9, 8 և 7 ոստիկանամասեր)—Զուբալօվի անուան Ժողովրդական Տանը. III բաժան. վերաբերմամբ (6, 5, 4 և 3 ոստիկանամասեր)—Քաղաքային Ուպրավայի շէնութեան մէջ, Երևանեան հրապարակի վրա։

Համագումարի առաջին բաժանմունքից պիտի ընտրվեն երկու ընտրողներ, երկրորդից և երրորդից՝ երեքական ընտրողներ, իսկ ռուսական կուրիայից՝ 13։

Համաձայն հրահանգի, հաստատված Ներքին Գործերի Մինիստրութեան կողմից օգոստ. 19 ին 1912 թ., ընտրական թերթերը ներկայացնում են իրանցից մի ամբողջ կամ կէս թերթ (նայած ընտր. համար նշանակված ընտրողների թւին) սովորական մեծութեան գրելու թուղթ և գրվում են ռուսերէն։ Ընտրական թերթերի մէջ պէտք է մատնանշված լինեն ինչպէս ազգանունը, անունը և հայրանունը այն անձերի, որոնց համար ընտրողը ձայն է տալիս, նոյնպէս և նրանց կոչումն ու բնակատեղին, կամ թէ այն համարը, որով նշանակված են նրանք անուանացուցակների մէջ։ Ընտրական թերթերի մէջ չը պէտք է ոչ մի ուղղումներ, մակագրութիւններ կամ ջնջումներ լինեն՝ թէ երեսի և թէ հակառակ կողմի վրա։ Այն թերթերը, որոնք չեն համապատասխանի յիշեալ պահանջներին, կը ճանաչվեն անվաւեր։ Վերոյիշեալ տեղեկութիւնները մտցվում են ընտրական թերթերի մէջ ըստ հայեցողութեան ընտրողի (ձեռագիր, տպագրած, լիտօգրաֆ և այլն) և պէտք է լինեն պարզորոշ և դիւրընթեռնելի։

Ընտրական թերթերը պիտի ներկայացնել այն ծրարների մէջ, որոնք ուղարկված են Քաղաքային Ուպրավայի կողմից, ըստ որում ծրարները փակելուց յետոյ չը պէտք է որևէ կնիք դնել։ Ծրարի մէջ պէտք է դրված լինի միայն ընտրական թերթը։

Այն ընտրողները, որոնք որևէ պատճառով չեն ստացել անուանական յայտարարութիւններ և ծրարներ ընտրական թերթերի համար, կարող են ստանալ Ուպրավայում, ներկայացնելով ոստիկանութեան, հաշտարար դատաւորի, նոտարի կամ պետական, հասարակական, դասային հիմնարկութիւնների կողմից իր անձնաւորութիւնը վաւերացնող վկայագրեր։

705. 2—1

Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ

Առևտրական Գիտութիւնների Կուրսերում

Նոր մեթօդով սովորեցվում են

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ

ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ [illegible] ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10-12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24—4.
(ա.օ.) 645. 0—15

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. ՊԱԿԷ եւ ԸՆԿ.

գրասենեակը գտնվում է Ս. Կիւլպէնկեանի գրասենեակին կից, Արմեանսկի բազար, Գոստինի դվօր Մանթաշեանի, №№ 119, 120, ուր և պէտք է դիմել Ընկերութեան գործերով՝ գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻՆ։
(հ.շ.) 695. 3—3

ԱՅՍ ՕՐԵՐՍ ՎԱՃԱՌՔԻ ԵՆ ՀԱՆՎԱԾ

ԳՐԱՄՈՖՈՆԱՅԻՆ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԳՐՈՒԹԵԱՆ

Բազմաթիւ նորոյթներ հայոց, վրաց, թուրքաց և ռուսաց լեզուներով,

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՄԵՆԱԼԱՒ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ.

TRADE MARK Пишущій Амуръ — ОБЩЕСТВО ГРАММОФОНЪ СЪ ОГР. ОТВ. — ОСТЕРЕГАЙТЕСЬ ПОДДѢЛОКЪ TRADE MARK

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՁՐԻ ՏՐՎՈՂ

ՊՐՈՍՊԵԿՏՆԵՐԸ

Թիֆլիս, Գոլովինսկի պր. 9. ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ՀԱՆԴԷՊ

704. 10—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный